

ԶԵԿՈՒՑՈՒՄ.

ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ

27-ը օգոստոսի 2014թ.

Խորհրդակցության հարգելի մասնակիցներ՝

Ուզում եմ բոլորիս շնորհավորել նոր ուսումնական տարվա կապակցությամբ, ցանկանալ մեր մանկավարժներին բեղմնավոր աշխատանք և հաջողություններ:

Այս տարվա մեր օգոստոսյան խորհրդակցությանը հրավիրել ենք ոչ միայն դպրոցների ղեկավարներին, այլև մեթոդ-միավորումների նախագահներին, առարկայական ուսուցիչների /հիմնականում հ. լեզվի և գրականության, մաթեմատիկայի, զինղեկների/ և նպատակ ունենք և արձանագրված հաջողությունների, և այն թերությունների շուրջ ծավալել ակտիվ քննարկում: Արված բոլոր առաջարկությունները կընդունվեն:

Հարգելի գործընկերներ

Դպրոցական համակարգում սկսված բարեփոխումները անընդհատ են և ընդունելի են դրանք, թե ոչ, մենք պարտավոր ենք իրագործել, իսկ այն իրականացնողները դուք եք :

Նախ ներկայացնեմ մեր մարզի կրթական ցանցի ընդհանուր պատկերը:

Մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, որոնցից 15 հիմնական, 35 միջնակարգ, որոնցից 2 վարժարան 3 ավագ դպրոց ՀՀԿԳ նախարարության ենթակայությամբ: 5 դպրոց գտնվում է սահմանամերձ գոտում, 5-ը բարձրլեռնային բնակավայրերում: 1 ԲՈՒՀ և Եղեգնաձորի պետական քոլեջը: Քաղաքային և գյուղական համայնքներում գործում է 17 մանկապարտեզ, 23 նախակրթարան:

Համայնքների ղեկավարների, մարզային վիճակագրական ծառայությունների և ԶԱԳՍ-ի բաժինների հետ համագործակցելով տարվել է դպրոցահասակ երեխաների հաշվառում: Այն այս տարի կազմում է 5912 աշակերտ: Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չունենք :

Մարզային ենթակայության 47 դպրոցներում կոմպլեկտավորված են 449 դասարաններ: 47 դպրոցներում աշխատում են 983 ուսուցիչներ, որոնցից 851-ը ունեն բարձրագույն կրթություն (86%), մնացածը ունեն միջնակարգ մասնագիտական կրթություն:

Ուսուցիչ աշակերտ հարաբերակցությունը 1:6, դասարանների միջին խտությունը 13, ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 17 ժամ:

Մարզի հանրակրթական դպրոցների մեծ մասը մոտ 80% և ավելի վերանորոգված են: Մարզի բոլոր դպրոցները ապահովված են համակարգիչներով, և սպասվում է, որ շուտով բոլոր դպրոցներին կտրվեն նոր համակարգիչներ, դպրոցներում լաբորատոր սարքավորումներով համալրումը կատարվում է հիմնականում <<Փյունիկ>> բարեգործական հիմնադրամի միջոցով, որի համար մենք հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Մարզպետարանի կրթության վարչությունը համագործակցելով ԿԳ նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի հետ տարբեր առարկաների գծով իրականացվել է 188 ուսուցիչների վերապատրաստում և աստեսավորում:

Հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ լուծվել է դասագրքերով ապահովվածության խնդիրը, վարձավճարները հավաքագրվել են 98%: Դպրոցներում ամբողջությամբ ամրապնդվել է շախմատ առարկայի դրվածքը, բոլոր դպրոցները ապահովված են անհրաժեշտ գույքով և դասագրքերով:

Վարչությունը սահմանված կարգով համագործակցելով ԿԳ նախարարության հետ անցկացրել է տարվա լավագույն <<ուսուցիչ>>, <<տնօրեն>>, <<ղաստիարակ>> մրցույթները: Դրանց արդյունքները նախարարությունում կամփոփվեն սեպտեմբերի վերջին:

Հաշվետու ժամանակաշրջանում մեր լավագույն ձեռքբերումներից է նախակրթարանների բացումը մարզի մի քանի համայնքներում: Այս տարի դրանք ավելացան ևս երեքով՝ Ջերմուկում, Կեչուտում և Եղեգնաձորում:

Մենք կարող ենք վստահ ասել, որ այս ծրագիրը մեր մարզում ամբողջությամբ կատարվել է:

Կրթության վարչությանը պատվիրակված լիազորություններից է մարզում ժամանակին դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպումը: Օլիմպիադաները կազմակերպվել են ԿԳ նախարարության սահմանած ժամանակացույցով: Օլիմպիադաներին մասնակցել են շուրջ 800 աշակերտներ տարբեր առարկաներից, բոլոր հաղթողները մարզպետի կողմից պարգևատրվել են դիպլոմներով, որոնք հանդիսավորությամբ հանձնվել են դպրոցներում: 30-ից ավել աշակերտներ մասնակցել են հանրապետական փուլին և նրանցից 7-ը արժանացել են դիպլոմների և գովասանագրերի: Մարզպետարանը ակտիվորեն համագործակցում է տարբեր հասարակական կազմակերպությունների հետ և ստորագրվել են համագործակցության հուշագրեր: Ժողովրդավարական կրթության կենտրոն, Սիվիտաս ՀԿ-ի հետ կատարվել են մեծածավալ աշխատանքներ մարզի դպրոցներում կրթության ժողովրդավարական կառավարման մարտահրավերները թեմայով: Վայոց ձորի մարզը համագործակցում է Ռուսաստանի Դաշնության Արխանգելսկի և Նիժնի Նովգորոդի նահանգների հետ: Այդ համագործակցության շրջանակներում կազմակերպվել են նաև կրթամշակութային միջոցառումներ: Համագործակցության արդյունքում հաշվի առնելով Մալիշկայի N2 և Ջերմուկի N1 դպրոցների մանկավարժական կոլեկտիվների խնդրանքը Վայոց ձորի մարզպետի որոշմամբ Մալիշկայի N2 դպրոցը անվանակոչվել է Մ.Վ. Լոմոնոսովի անվամբ, իսկ Ջերմուկի N1 դպրոցը Մաքսիմ Գորկու անվամբ:

Մենք նախորդ տարում մասնակցել ենք <<Երգը բարեկամության կամուրջ է>> ռուսական երգի փառատոնին: Այս տարի նախապատրաստվում ենք ավելի ակտիվ մասնակցել: Փառատոնը կազմակերպվել է Հայերի համաշխարհային

միության նախաձեռնությամբ՝ մեր հայրենակից Ա. Աբրահամյանի հովանավորությամբ:

Հարգելի գործընկերներ մեր այս տարվա կատարած աշխատանքներից կարելի է առանձնացնել <<Կայուն դպրոցական սնունդ >> ծրագրի մուտքը մեր մարզ: Ասեմ, որ մեր մարզի շատ դպրոցներ՝ Եղեգնաձորի N1, Արենիի, Արփիի Վերնաշենի, Մալիշկայի N1 և N2, Զառիթափի, Գնդեվազի, Կեչուտի դպրոցները պատրաստակամորեն արձագանքեցին ծրագրի կատարմանը: Ծրագիրը համարվում էր պիլոտային: Ծրագրի շարունակման արդյունքում բոլոր դպրոցները պատրաստ են կատարել ՀՀ Կառավարության ընդունած որոշումը: 2014թ-ի սեպտեմբերի 1-ից Վայոց ձորի մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 1-4-րդ դասարանների երեխաները դպրոցում կստանան սնունդ: Սկզբնական շրջանում հյութերի և թխվածքաբլիթի տեսքով հետագայում կփոխարինվի տաք ճաշերով:

Հաշվետու ժամանակահատվածում վարչությունը համագործակցելով հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդների հետ մի շարք դպրոցներում օրենքով սահմանված կարգով անցկացրել է տնօրենների ընտրություններ: Անցած ուստարում նոր տնօրեններ են ընտրվել Վայքի հիմնական, Մարտիրոսի, Շատինի, Գողթանիկի, Արտավանի դպրոցներում:

Մեր ամենօրյա աշխատանքներից է դպրոցներում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթների սահմանված կարգով անցկացումը: Մարզում անցկացվել է 37 ուսուցչի թափուր տեղի համար մրցույթներ և դրանք անցկացվել են օրենքով սահմանված կարգով: Բավականին աշխատանքներ կատարվել են դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ: Կազմակերպվել են <Կորյուն> ռազմավարական խաղեր դպրոցների միջև:

Մարզպետի որոշմամբ այս տարի մարզի հանրակրթական դպրոցների միջև անցկացվեց հրաձգության մրցումներ: Մրցումների արդյունքները ամփոփվեցին սպարապետ Վազգեն Սարգսյանի ծննդյան 55 ամյակի օրը Եղեգնաձորի ավագ դպրոցում կազմակերպված միջոցառման ժամանակ և հաղթողները արժանացան խրախուսանքների և պատվոգրերի:

Որպես նոր համագործակցություն մենք մարզի մի շարք դպրոցներում կազմակերպել ենք պատանի երկրապահների խմբակներ, և այդ խմբերը

մասնակցել են Երկրապահի օրվա, մայիսյան բոլոր հաղթանակների տոներին: Չնայած կատարված աշխատանքներին, մենք մեծ անելիք ունենք մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ: Առավելապես հանրապետության ռազմական բուհերում ընդունելության շրջանավարտներ գործուղելու աշխատանքներում:

Անցած ուստարում սահմանված ժամկետներում համագործակցելով գիտելիքների գնահատման և թեստավորման կենտրոնի հետ, սահմանված գրաֆիկով կատարվել են դպրոցների արտաքին և ներքին գնահատման աշխատանքները: Միաժամանակ սահմանված ժամկետներում կատարվել է շրջանավարտների միասնական և ավարտական քնությունների հայտավորումը: Քնությունները անցկացվել են առանց խախտումների: Եվ 12-րդ, և 9-րդ դասարան ավարտած բոլոր շրջանավարտները ստացել են պետական նմուշի ավարտական փաստաթուղթ: Պետական ԲՈՒՀ դիմած մեր շրջանավարտների 30%-ն ընդունվել են տարբեր ուսումնական հաստատություններ: Չնայած կատարված աշխատանքներին մեզանում շարունակում է բաց մնալ միջնակարգ մասնագիտական կրթության հարցը: Եղեգնաձորի պետական քոլեջը ունի հսկայական հնարավորություն պետական պատվերի շրջանակներում տալ մասնագիտական կրթություն, բայց դիմորդները քիչ են:

ՀՀ կառավարության և Վայոց ձորի մարզպետարանի աջակցությամբ մարզի սոցիալապես անապահով, բազմազավակ ընտանիքների 195 դպրոցահասակ երեխաներ հանգստացել են Հանքավանի <<Հասմիկ >> ճամբարում:

Հարգելի գործընկերներ, հաշվետու ժամանակահատվածում կատարվել են զգալի աշխատանքներ, որոնց մասին խոսելը և հեշտ է, և հաճելի, բայց մեր այսօրվա խնդիրը այն է, որ միաժամանակ վեր հանենք այն թերությունները և բացթողումները, որոնք մեզանում առկա են, նշել դրանց հաղթահարման ուղիները:

Դժբախտաբար տարեց տարի օբյեկտիվ թե սյուբեկտիվ պատճառներով պակասում է աշակերտների թիվը, որը բացասաբար է անդրադառնում ամբողջ ուսումնական գործընթացի վրա:

Մարզում մինչև 50 աշակերտ ունեցող դպրոցները 17-ն են , իսկ 50-100 աշակերտ ունեցող դպրոցները 11-ն են: Ամեն տարի այս մասին խոսում ենք,

ամեն անգամ բարձրաձայնում ենք այս հարցը, բայց մենք չունենք դրա պատասխանը: Որ համայնքի միակ դպրոցը կարևոր է դա անվիճելի է, բայց դա չի կարելի անվանել դպրոց, ՊՈԱԿ. դրա անունը պետք է դնել օրինակ ուսումնական կենտրոն: Թերկոմպլեկտավորված դպրոցում, երկկոմպլեկտ դասարաններում անհնարին է կազմակերպել նորմալ ուսումնական գործընթաց:

50-100 աշակերտ ունեցող դպրոցներում անհնար է ուսուցիչներին վարձատրել սահմանված դրույքաչափերով և նորմատիվներով: Խոստովանենք որ դա ինքնախաբեություն է: Այս կարգի դպրոցներում նույն առարկայի 1-ից ավելի ուսուցիչներ ենթակա են կրճատման, սակայն ոչ մի օրինական մեխանիզմ չի մշակված:

Առաջարկում ենք հիմնադիրին՝ ՀՀ կառավարությանը կրթության պետական լիազորված մարմնին վերանայել այս հարցը:

Վերջին ժամանակներում ԿԳ նախարարության տեսչության կողմից, որից հետո ՀՀ վայոց ձորի մարզպետի կողմից, ստեղծվեցին հանձնաժողովներ, դպրոցներում կատարելու ուսումնասիրություններ:

Կազմակերպեցին քննարկումներ, տրվեցին հանձնարարականներ, զգուշացվեցին դպրոցների տնօրենները, հրավիրվեցին առարկայական ուսուցիչներ հ. լեզվից և մաթեմատիկայից, բայց արդյունքները մեզ չեն գոհացնում:

Այսօր ձեզ հրավիրել ենք խորհրդակցության, որպեսզի զգուշացնենք, որ չի կարելի աշխատել հնացած մեթոդներով, աններելի է ՅՕ արդյունք ցույց տված ցանկացած ուսուցչի թողնել դպրոցում ցանկացած առարկայից: Մենք նոր ուսումնական տարում հետամուտ ենք լինելու դրան:

Լուրջ բացթողումներ ունենք Dasaran.am ծրագրի հետ կապված: Քիչ առաջ նշեցի, որ մեր մարզը համակարգիչների քանակով հանրապետությունում լավագույններից է և շուտով դրանք կավելանան: Բայց դա նրա համար է, որ դրանցից լիարժեք օգտվեն և աշակերտները և ուսուցիչները. մենք այս հարցում պարտադիր լինելու ենք շատ հետևողական:

Կրթական բարեփոխումներն անընդհատ են, հարկավոր է լրջորեն վերաբերվել ամեն նորության: Նորություն է մեզանում անցյալ տարվանից սկսված, այս տարի շարունակվող կայուն դպրոցական սնունդ ծրագիրը:

Հարգելի գործընկերներ այս ծրագրի իրականացումը պարտադիր պայման է, մեզանից է կախված դրա հետագա շարունակությունը ՀՀ մնացած մարզերում և ես կարծում եմ, որ մեր գործընկերները պատասխանատվությամբ և լրջությամբ կվերաբերվեն այս հարցին:

Հարգելի գործընկերներ կրթական բարեփոխումները թելադրված են ժամանակի պահանջով, հետևաբար այդ ծրագիրը այլընտրանք չունի: Մեր՝ կրթության համակարգի պատասխանատուներին, խնդիրն է ժամանակին արձագանքել, հապաղելն անթույլատրելի է:

Ես համոզված եմ, որ մեր մարզի մտավոր ներուժն ի վիճակի է կատարելու իր առջև դրված խնդիրը, և սրտացավ, հետևողական, անմնացորդ ու ստեղծագործական նվիրումով աջակցելու դեպքում կատարած կլինենք մեր առաքելությունը, առաքելությունն որը մենք կամովի ենք ստանձնել:

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի

կրթության վարչության պետ Ա. Ղազարյան